

ՀԱՅԿԱԿԱՆ ԾՆՈՒՆԴ

Posted on December 30, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Գրիգոր Գրաճեան, Պէյրուզ, Դեկտեմբեր 2010



Ընտանեօք նստած ենք սեղանին շուրջ: Հայրիկը կը բաժնէ թղթիկներ, որոնց վրայ իր մաքուր ձեռագրով ընդօրինակած է Ծնունդի երգին բառերը: Նախքան ընթրիքը, աղօթք մը ըսելու պէս կ'երգենք այս երգը.

- Այսօր տօն է, սուրբ Ծննդեան ակետիս
Ծնաւ եբեր անմահ արքան, ակետիս ...

Սեղանին վրայ անպայման կան մեծ մամային պատրաստած “քաղքէ”ն ու “քեթէ”ն: Գրիգոր Գրաճեան, Պէյրուզ, Դեկտեմբեր 2010



Ընտանեօք նստած ենք սեղանին շուրջ: Հայրիկը կը բաժնէ թղթիկներ, որոնց վրայ իր մաքուր ձեռագրով ընդօրինակած է Ծնունդի երգին բառերը: Նախքան ընթրիքը, աղօթք մը ըսելու պէս կ'երգենք այս երգը.

- Այսօր տօն է, սուրբ Ծննդեան ակետիս
Ծնաւ եբեր անմահ արքան, ակետիս ...

Սեղանին վրայ անպայման կան մեծ մամային պատրաստած “քաղքէ”ն ու “քեթէ”ն:

Ծնունդին նախորդող ամբողջ շաբաթը, թաղի փռապանները՝ Ղազարոսը, Մովսէսը եւ Յակոբը, գլուխ քերելու շամանակ չէին ունենար: Թաղեցիք, խմորեղէնի ափսէներ բռնած, իրարանցումով եւ հրմշտուքով կարգի կը սպասէին: Ամբողջ թաղը կը բուրեր եփած խմորի հոտով:

Նոր տարուայ եւ Ծնունդի խմորեղէններէն մեզ՝ փոքրերս, ամենէն շատ հրապուրողը եւ գործնականը ափի մեծութեամբ անուշ համով “քաղքէ”ն էր: Մեր գրպաններուն պարունակին՝ հոլին, չաթալին, գնդիկներուն կողքին տեղ կը գրաւէր նաեւ “քաղքէ”ն: Իսկ պնակի մը մեծութեամբ “քեթէ”ն, աղի, մեծ մամային գաղտնի եւ խորհրդաւոր բաղադրութիւնը կրող խմորեղէնը, միայն մեծերն է որ կը գնահատէին: Երբ քահանան տունօրհնէքի գար, սեղանին վրայ անպայման կը դրուէր մեծ մամային խաչի նշանը կրող ձեռագործ “քեթէ”ն, գաւաթ մը ջուրին եւ փոքր պնակ մը աղին հետ:

Խթման գիշերը, մայրիկին պատրաստած հաւն ու փիլաւը ախորժակով կ'ուտենք, ակելի ճիշդը՝ կը լափենք, որպէսզի լսենք հայրիկին Ծննդեան պատմութիւնները, մեր հերոսներուն՝ Անդրանիկին, Մուրատին, Սերոբ Աղբիւրին քաջագործութիւնները: Այնքան տարուած ենք թուրք ասկերին կատարած սանձարծակութիւններէն, քիւրտ բեկին անհրաւութիւններէն, հայու արդար ընդվզումէն, որ երբ մայրիկը ներս կը բերէ շիկացած ածուխներով վառարանը (մանդալը), երեւակայութեամբ կ'երթանք Հայաստանի գոմերը, ուր ձմեռուայ բուք ու բորանին, մեզի նման պատանիներ մտիկ կ'ընէին մեծերուն պատմութիւնները, ի վերջոյ ստանալով անոնց բաղձանքը.

- Ապրե՛ք, երեխեք, բայց մեզ պես չապրե՛ք

Նոյն խօսքը կը կրկնէր հայրիկը մեզի, երբ կը յիշեր բռնակ ոտքերով դպրոց երթալը, ամբողջ օրը քաղցած մնալը եւ ցուրտ ձմռան , մինչեւ ոսկորները թափանցող պաղուն դիմադրելը: Վարկեանի մը համար կը հասկնամ ինչ ըսել կ'ուզէր հայրիկը: Մի քանի օր առաջ այնքան պաղ ըրած էր, որ Կերթմենեան վարժարանի խոնաւ պատերով դասարանին մէջ կեսով մը սառած էինք: Մօտս, նոյն գրասեղանը ինծի հետ բաժնող տղան, պայուսակէն գաղտագողի կը հանէ լաթի մը մէջ փաթած մարմար մը, որը ամբողջ գիշերը կրակարանին վրայ տաքցուցած էր եւ ինծի թոյլ կու տայ ատենը մէյ մը ձեռքերս վրան դնել, որպէսզի տաքնան:

Բոլորուած ածուխէ կրակարանին շուրջ, երբ մեզմէ մէկը փորձեր օդին մասին ակնարկութիւն մը ընել, գանգատիլ պաղին եւ անձրեւին մասին, մայրիկը, ցուրտը որպէս փաստ կը գործածէր հայկական Ծնունդի իսկական ըլլալը ապացուցելու համար:

- Մեր, հայկական Ծնունդը իրականն է: Յիսուսի ծնած օրն ալ այպէս ցուրտ էր:

Մեր տան մէջ երաժշտական հակումը տեւապէս եղած է գերակշռող: Ոչ մէկս բաղաձայն էր: Այժմ հայրիկը մանտոլինին վրայ եղանակներ կը նուագէր եւ ամէն մէկէս կը պահանջէր երգ մը: Ժողովրդային, հայրենասիրական երգերը, մէկը միւսին ետեւէն տաքուկ զգացումներով կը լեցնէին մեր սրտերը: Ամէն մէկը ուներ իր նախասիրած երգը: Մեծ մաման անպայման կուզէր լսել “Ազատն Աստուածը”.

Ազատն Աստուած այն օրից,
երբ հաճեցաւ շունջ փչել,
իմ հողանիւթ շինուածքին
կենդանութիւն պարգեւել:

Մայրիկը ուներ իր նախասիրած երգը՝

Իմ խենդ գարնան օրեր անուշ, եկեք ինձ կրկին
սուրբ ցնորքներ, յուշեր քնքուշ իմ երագ կեանքին:
Հիմա աղքատ, թշուառ եմ ես, սիրտս է պարապ ու լռին,
բայց դուն միշտ տաս յուշ հրակեզ, դուն՝ ժպիտն իմ թախծին:

Հօրաքոյրը կուզէր լսել “թռչէի մտքով տուն”ը:
Եւ այսպէս. “սեւ աչերը”, “կոլխոզի չոպան”ը, “բարի գեղեցիկ”ը մեզ կը մօտեցնէն գիշերուայ 12-ին: Հեռուէն կը լսուի երաժշտական գործիքներու՝ աքորտիոնի, ծնծղաներու, հարմոնիքայի հետ միացոյլ անուշ երգեցողութիւն:

- Եկա՛ն:

Անտեսելով ցուրտը, բոլորս դուրս կ'ելլէնք, տան մուտքին, ունկնդրելու, երգելով եւ բարեմաղթութիւններով մասնակցելու Քրիստոսի ծննդեան աւետիսը տարածող

Երիտասարդական խումբերուն, որոնք մոմերով կը շրջին թաղերը, հայկական թաղերը, Քրիստոսի լոյսն ու խօսքը փոխանցելու:

Ընդունելէ ետք մեծ մամային փափաքը՝ “ Ամեն տարի բարով հասնի”, կը վերադառնանք մեր տաքուկ սենեակը, շարունակելու համար խթման գիշերուայ յայտագիրը՝ կատակներով, անակնկալներով, խաղերով ճոխացուած:

- Հայրիկ, լուցկիներու խաղը խաղանք:
- Չէ, նախ փամպակին եւ սաւանին խաղը:
- Ո՛չ, ո՛չ, “Նշանաճս ո՞վ է”ն:

Մեր ընտանիքին համար ամենէն երկար գիշերն էր երբ կրնայինք անքուն մնալ եւ զուարճանալ: Վերջապէս, յոգնած ու ուժասպառ, երբ կ'ուզէնք մտնել մեր խոնաւ ու սառոյց դարձած անկողիները, մայրիկը կարգով, ամեն մէկուս ծածկոցը ածուխէ կրակառանին առջեւ բռնած կը տաքցնէ, ապա կը ծածկէ մեզ:

Յաջորդ առաւօտ, ծնունդի օրը բացառիկ օր մըն է: Նախ կը համբուրենք հայրիկ-մայրիկին ձեռքը, ապա բոլորս ալ պաշտօնական օրերու յատուկ մաքուր զգեստներ հագած ընտանեօք կ'ուղղուինք եկեղեցի, հաղորդուելու համար: Ճամբան հայրիկը կը հարցափորձէր. “Մէկը վշտացուցա՞ծ էք, մէկու հետ քէ՞ն էք”: Եթէ այո, պէտք էր անպայման երթայինք եւ հաշտուէինք նախքան հաղորդուիլը: Կը յիշեմ, տարի մը գացի ընկերոջ մը մօտ, որու հետ քէնցած էի եւ զինք փողոց հրաւիրեցի: Ընկերս երբ զարմացած կ'ուզէր պատճառը գիտնալ, երկարեցի ճկոյտ մատս, իբրեւ հաշտութեան նշան եւ բացատրեցի թէ նախքան հաղորդուելու երթալս պէտք էր հաշտուէինք:

Եկեղեցիէն վերադարձին, տղամարդիկը կ'այցելէին ազգականներու եւ բարեկամներու տուները, Ծնունդը շնորհաւորելու, իսկ մենք անհամբեր կը սպասէնք հայրիկին վերադարձին, որպէսզի շաքար-շոքուլաները, իր այցելած տուներէն հրամցուած, մեզի բաժնէր:

Օդը կը շարունակէր ցուրտ ընել: Մենք բոլորուած՝ մանդալին՝ շուրջ շաքանակ կը խորովէնք եւ հայրիկին բերած շոքուլաները կը համտեսէնք, մրցումի ելած իրար հետ.

- Աս շոքուլան հօրաքոյրենց տունէն է: Այս շաքարը Չալեաններէն, Խրիմեաններէն, Ղաւզալեաններէն ... է:

Մինչ մայրիկը, հիւսկը ձեռքը կը շարունակէ կրկնել, թէ մեր՝ հայկական Ծնունդն է իսկականը:

Հիմա ըսէք, տեսեմ, կրնա՞մ զաւակներուս կրկնել ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի խօսքերը.

- Ապրէ՛ք, երեխէք, բայց մեզ պէս չապրէ՛ք:

